Նաթալին ձեռքերիս մէջ դրել է իր թրթռացող սիրտը, երկար սեղմում է:

Դպրոցի մի աշակերտուհի ծաղիկներ է բերել եւ բաց նամակների վրայ նկարուած աղջիկների պէս «յոյս եւ սէր» է մատուցում: Մի բարեկամ իր թեւերի աքցանը սեղմել է վրաս եւ յուզումից խօսքերը կորցրել է: Նապոլիտանցի կոկորդները նաւի վրայ մարդարիտ են շարում: Տաճիկների դէմքերը լրբացել են: Կայմի վրայից դրօշակը նետում են վար: Մեքենավար բանուորները ածուխ եւ քրտինք են թափում:

Նաւը նորից սուլում է եւ ցնցւում:

Նաւակները մժեղների նման խայտում են ջուրը:

Քարափը պոռում է նաւին, նաւը պոռում է քարափին: Ոչ ոք չի հասկանում:

Բախում: Առաջակայմը դողում է: Հաւատաքննական մեքենաների տակ չուանները լարւում են եւ հեծում: Աղմկալից պտտակը ծեծում է ջուրը եւ ճառագայթների փրփուրներ դիզում:

Վերջին բարեւներ: Արցունքներ:

Թաշկինակները հեռանում են: Գալաթայի աշտարակը վերադառնում է տուն:

Սկիւտարը, դլուխը ծռել, Մրմրեանի հետ խօսում է:

Վոսփորի ափերից սատափ ու զմրուխտ է իջնում:

Ցեռոյ ամէն ինչ ճեղքւում է եւ լայնանում:

Ծով:

* * *

Տեղաւորումի առաջին վայրկեաններ: Զսպել երեխաներին: Ծածկել հոգսերը: Աղքատ ճամբորդի անյարմարութիւններին՝ տարերային դէպքերի ճակատագրական լոյս սրսկել:

Մեր երկիրը աղքատ է, մենք էլ աղքատ ենք: Դէ, ի՞նչ արած... Երեւանի բաղերում լեցուն պտուղներ կան...Այո՛, ձի էլ պիտի ուենենք, կով էլ, ոչխար էլ...

Հայաստանը՝ «երկիր դրախտավայր»:

Երեխաները ենթարկւում են դարաւոր ռոմանթիզմին՝ ոտք դնում անիծեալ ճանապարհի վրայ, հաշիշների մէջ կորչում:

Իսկ ես՝ վախում եմ մտածել:

Մինակ էլ չենք: Շատերն են գնում: Պատահական անկողիններ են սարքել եւ իրենց մտահոգ գլուխները վար դրել: Նախ՝ ժպտում են, բայց վերջը ժպիտը կընճիռների տակ է կորչում. իրը թէ հով է: Ցած ձայնով են խօսում: Իրենց շուրջն են նայում:

Չեմ հասկանում:

Եթէ ծնած լինէի ուրիշ պայմաններում՝ նաւորդ կը լինէի:

Ամէն մարդ փնտռում է արտաքին առարկաների մէջ իր ներքին տեսիլքների համարժէքը:

Նաւը ապրում է ինձ հետ մարմնապէս: Ես նրան զգում եմ բնականօրէն. ինձ հարազատ եւ մտերիմ: Գիտակցում եմ նրա էութեան առանց որեւէ ճիգի. ինչպէս բնութեան ակներեւ մի երեւոյթ, հիմնաւորուած մի իդէականութիւն՝ կայուն եւ կենսարար:

Ոմանց համար նաւը արկածախնդրութիւն է, Բէմբոի «դինովցած նաւը», ողբերգական, ճակատագրական փոթորիկների խոր ակօսում եւ անյայտ: Ոմանց համար էլ նաւը մըշտնջենական մեկնում է դէպի անծանօթը, վախ է եւ տրտմութիւն: Հաստատուն ափերից հեռացող առեղծուած: Ալիքների մէջ ծեփուած տեսիլք, դրեթէ անմարմին մի երեւոյթ:

Ինձ համար իրականութիւն է: Ճարտարապետական ձեւի տրամաբանական արտայայտութիւն՝ կեանք:

Կեանք: Գեղեցիկ կեանք: Կայմից մինչեւ խարիսխ, բնական եւ անհրաժեշտ: Ցաւխտենականութիւն: Կայունը անկայունի դէմ: Հաստատուն կամքը մխրճուած տարերայինի սրտին: Եսը ալեկոծումի մէջ:

Անկարելի է երեւակայել արդիական ամբողջ կուլտուրան առանց նաւի:

Կուլտուրան, մշակոյթը, այսինքն՝ հոգեկան աւանդութիւնների հսկայ ժամադրութիւնը եւ ոչ քաղաքակրթութիւնը՝ մեքենայական, նիւթական յարմարութիւնների այդպէս անուանուած առաջադիմութիւնը:

Կուլտուրան նաւ է, քաղաքակրթութիւնը վախ է ալեկոծուած ծովից:

Կան երկիրներ, որոնք աւելի անկայուն են քան նաւը, աւելի շարժուն եւ հոսողութեան ենթարկուող: Կան դիմադրող երկիրներ, որոնք բխած են ալիքներից, մինչ նաւը կղզի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան